ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1-Ն

24 հունվար 2018 թվական գյուղ Երազգավորս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 18-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 4-րդ մասի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի 3 –րդ ,5-րդ մասերի դրույթներով

Համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Երազգավորս համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Երազգավորս համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 18-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները

1.Համայնքի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ<<0>>դրամ թիվը փոխարինել <<9016.0>> հազար դրամ թվով,և բառերով որից
1) վարչական մասի մնացորդ <<0>>դրամ թիվը փոխարինել <<8094.1>>հազար դրամ թվով և բառերով ,
2) ֆոնդային մաս մնացորդ<<0>>դրամ թիվը փոխարինել << 921.9>> հազար դրամ թվով և բառերով :
2.Համայնքի բյուջեի վարչական մաս տարեսկզբի ազատ մնացորդի գումարն ուղղվում է՝ համայնքի բյուջեի ֆոնդային մաս:
3.Եկամտային մասի ընդամենը եկամուտներ տողի <<35668.3 >>հազար դրամ թիվը փոխարինել <<36889.6 >> հազար դրամ թվով:
4.<<Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար>>1112 տողի <<1674.8>> հազար դրամ թիվը փոխարինել << 1884.8>> հազար դրամ թվով:
5. <<Գույքահարկ փոխադրամիջոցների համար. տողի <<3850.0>> հազար դրամ թիվը փոխարինել <<4765.5>> հազար դրամ թվով:
6. Ծախսային մաս հատված 2 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Երազգավորսի համայնքի 2018 թվականի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

1) Ընդամենը ծախսեր տողի <<35668.3>> հազար դրամ թիվը փոխարինել <<45905.6 >> հազար դրամ թվով , այդ թվում

2) վարչական մաս սունյակի << 35668.3>> հազար դրամ թիվը փոխարինել <<36889.6 >> հազար դրամ ,թվով

3) ֆոնդային մաս սույնակը լրացնել <<9016.0>> հազար դրամ թվով,

7. Հոդված 6 <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Երազգավորս համայնքի 2018 թվականի բյուջեի ծախսերը ՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման >>

1) Ընդամենը ծախսեր տողի << 35668.3>> հազար դրամ թիվը փոխարինել << 45905.6>> հազար դրամ թվով ,

ա) այդ թվում վարչական մաս սույնակի <<35668.3>> հազար դրամ թիվը փոխարինել <<36889.6 >> հազար դրամ թվով ,

բ) ֆոնդային մաս սույնակը լրացնել << 9016.0>> հազար դրամ թվով

8 <<Պահուստային միջոցներ >> 4891 հոդվածի <<4408.1>> հազար դրամ թիվը փոխարինել <<5539.4>> հազար դրամ թվով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ -7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Բագրատունի Արսեն
Գևորգյան Գևորգ
Գրեյան Հովհաննես
Գրիգորյան Համբարձում
Հարոյան Ղուկաս
Մխիթարյան Արամ
Սիմոնյան Ալիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

24 հունվար 2018 թվական
գյուղ Երազգավորս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2-Ն

24 հունվարի 2018 թվական գյուղ Երազգավորս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1- ին մասի 5-րդ կետի և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասերի դրույթներով համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Երազգավորս համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Բագրատունի Արսեն
Գևորգյան Գևորգ
Գրեյան Հովհաննես
Գրիգորյան Համբարձում
Հարոյան Ղուկաս
Մխիթարյան Արամ
Սիմոնյան Ալիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

24 հունվար 2018 թվական
գյուղ Երազգավորս

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ 24 -ի ԱՎԱԳԱՆՈՒ
ԹԻՎ 2- Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հ/ Հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվարկային Հազար դրամ	Փաստացի Հազար դրամ	%
1	Հողի հարկ	1673.8	1191.3	71.1
2	Գույքահարկ	3874.3	2584.5	66.7
3	Տեղական տուրք	40.0	40.0	100
4	Տեղական վճար	0	2.0	
	Աղբահանում	92.3	0	
	Ընդամենը	5680.4	3817.8	67.2

ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

1 Հողի վարձավճար	192.1	200.3	104
Ընդամենը	192.1	200.3	104

1	Դոտացիա	27708.2	27708.2	100
	Ընդամենը	27708.2	27708.2	100
	Ընդամենը համայնք	27900.3	27908.5	100.02

ԾԱԽՍԵՐ

	Անվանումը	Հաշվարկային	Փաստացի	Տարբերություն	
				Տնտեսում	գերածախս
1	Աշխատավարձ և հավելավճար	14136.7	14093.8	42.9	-
2	Պարգևատրում , դրամական խրախուսում	600.0	0	600.0	-
3	Ծառայություն և ապր ձեռք բեր	12967.3	7632.6	5333.9	-
4	Սոց, օգնություն	1425.2	1120.0	305.2	-
5	Դրամաշնորհ	620.0	618.8	2.0	
6	Այլ ծախսեր	1977.1	167.0	1810.1	
7	Ընդամենը	31726.3	23632.2	8094.1	-

Կապիտալ ծախսեր

1	Անվանումը	Հաշվարկային	փաստացի	տնտեսում	Գերածախս
2	Աճեցվող ակտիվներ	330.0	330.0	0	-
3	Շենքերի և շինությունների կապ. վերանորոգում	10249.8	9327.9	921.9	-
	Ընդամենը	10579.8	9657.9	921.9	-

Համայնքի ղեկավար Ա. Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ 3-Ն

24 հունվարի 2018թվական գյուղ Երազգավորս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 16-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի ու «Տեղական տուրքերի և տեղական վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<Բ>> ենթակետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Երազգավորս համայնքի ավագանին:

Որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Երազգավորս համայնքի վարչական տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանել՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Երազգավորս համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Երազգավորս համայնքի վարչական տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 22-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 16-Ն որոշումը:
3.Սույնը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 25-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

Բազրատունի Արսեն
Գևորգյան Գևորգ
Գրեյան Հովհաննես
Գրիգորյան Համբարձում
Հարոյան Ղուկաս
Մխիթարյան Արամ
Սիմոնյան Ալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱՇԵՍ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

24 հունվար 2018թվական
գյուղ Երազգավորս

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Երազգավորս համայնքի
ավագանու 2018 թվականի հունվար 24-ի
թիվ 3-Ն որոշման

Տեղական տուրքերի դրույքաչափեր

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Երազգավորս համայնքում(այսուհետ՝համայնք)սահմանվումեն տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվությանհամար.

1)հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդթվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպեսնաևմինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

2)սույն կետի «ա» ենթակետով չնախատեսվածշենքերի և շինությունների համար՝

ա. 200-իցմինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,

բ. 500-իցմինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

գ. 1000-իցմինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝հիսուն հազար դրամ,

դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝հարյուր հազար դրամ.

3)ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա.մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2.Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդթվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

2)բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,

վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդթվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացիասյնկետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նոր մեր և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդթվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքիի մաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նոր մերը և դրույքաչափերը.

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4.Համայնքի վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ ացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

5.Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ ացվածնավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.

6.Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7.Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքներին (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

1)ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝Երկու հազար ութ հարյուր յոթանասունհինգ դրամ,

բ. 26-իցմինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝Տաս հազար հինգ հարյուր դրամ,

գ. 50-իցմինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝տասներեք հազար հինգ հարյուր դրամ,

դ. 100-իցմինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝քսանմեկ հազար մեկ դրամ,

ե. 200-իցմինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝քսանվեց հազար դրամ,

գ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունվեց հազար դրամ.

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպմանդ եպքում՝ Երեք հազար դրամ,

բ. 26-իցմինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար հինգ հարյուր դրամ,

գ. 50-իցմինչև 100 քառակուսի մետ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասերեք հազար հինգ հարյուր դրամ,

դ. 100-իցմինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանմեկ հազար դրամ,

ե. 200-իցմինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանվեց հազար դրամ.

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասու վեց հազար դրամ.

8.Բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9.Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1)առևտրի օբյեկտների համար՝ քսան հինգ հազար դրամ,

2)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար ՝հիսուն հազար դրամ,

3)բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

4)խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

5)շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

6)վիճակախաղերի համար՝ մեկ հարյուր հազար դրամ.

10.Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1)հիմնական շինությունների ներսում՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար ութ հարյուր յոթանասուն հինգ դրամ,

բ. 26-իցմինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ

գ. 50-իցմինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հին հարյուր դրամ,

դ. 100-իցմինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց հազար կդրամ,

ե. 200-իցմինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանմեկ հազար դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսունմեկ հազար դրամ.

2)ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

բ. 26-իցմինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար մեկ հարյուր դրամ,

գ. 50-իցմինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

դ. 100-իցմինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

ե. 200-իցմինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար տասնվեց հազար դրամ .

11.Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

3)սոցիալական գովազդի համար՝ զրոդրամ,

4)այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

5)դատարկ գովազդային վահանակների համար՝համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանվածտուրքի25 %-ի չափով,

6)եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի10 %-ի չափով.

12.Համայնքի խորհրդանիշը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

13.Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

14.Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

15.Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝հինգ միլիոն դրամ,

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝յոթ միլիոն դրամ,

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝տասը միլիոն դրամ:

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի
Երազգավորս համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան

Անուն,ազգանուն

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Երազգավորս համայնքի
ավագանու 2018 թվականի հունվար 24-ի
թիվ 3-Ն որոշման

Տեղական վճարների դրույքաչափեր

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Երազգավորս համայնքում (այսուհետ՝ համայնք)սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.

2.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդթվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ չորս հազար դրամ.

3.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեկ հազար դրամ դրամ.

4.Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.

5.Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ հազար դրամ.

6.Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

7.Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. Ըստ հաշվառված անձանց քանակի՝համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցողն (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝105դրամ,

բ. Ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ առավելագույնը 25 դրամ.

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. Ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ առավելագույնը 500 դրամ,կամ
բ. Ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 5000 դրամ:

8.Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում էերկու հազար դրամ.

9.Կենտրոնացված ջեռուցման համար՝համայնքիկողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ տաս հազար դրամ.բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

10.Ջրմուղ-կոյուղու համարայնհամայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ տաս հազար դրամ.բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնիմասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

11.Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ տաս հազար դրամ դրամ,բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

12.Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերիկատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցմանգումարի չափով՝ մեկ հարյուր հազար դրամ դրամ.

13.Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝երկու հազար հինգ հարյուր դրամ.

14.Համայնքային ենթակայությանարտա դպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ հինգ հազար դրամ.

15.Համայնքիվարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝երկու հազար դրամ.

16.Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝զրո դրամ.

17.Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար տեղական տուրքը սահմանվում է.

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ մեկ հարյուր դրամ

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ մեկ հազար դրամ.

3) մեկ շաբաթվա համար՝ երեք հազար դրամ.

4) մեկ ամսվա համար՝ տաս հազար դրամ.

5) մեկ տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

18.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ութ հարյուր դրամ փոխհատուցման վճար:

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի
Երազգավորս համայնքի ղեկավար՝ Ա.Մխիթարյան

Անուն,ազգանուն